Կարգապահական գործ թիվ ԿԳ-17033

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017թվականի նոյեմբերի 23-ի թիվ 176-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/104-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԳԵՎՈՐԳ ՉԱՔՄԻՇՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Արայիկ Ղազարյանի, Խորհրդի անդամներ՝ Նելլի Հարությունյանի, Հարություն Հարությունյանի, Տարոն Սիմոնյանի, Կարեն Սարդարյանի, Տարոն Սիմոնյանի, Մելանյա Առուստամյանի

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Գևորգ Չաքմիշյանին (արտոնագիր՝ 852) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

16.05.2017թ. Պալատում մուտքագրվել է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի **(այսուհետ նաև՝ Դատարան)** դատավոր Կարեն Զարիկյանի (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմումը, որում նշվել է, որ Դիմողի վարույթում գտնվող թիվ ՎԴ/4134/05/15 վարչական գործով երրորդ անձ Գագիկ Գևորգյանի փաստաբան Գևորգ Չաքմիշյանը 10.05.2017 թվականին դատավորի ինքնաբացարկի վերաբերյալ գրավոր միջնորդություն է ներկայացրել, որի տեքստում տեղ են գտել մի շարք վիրավորական և զրպարտիչ հայտարարություններ, ինչպես օրինակ, *«երրորդ անձ Գ. Գևորգյանի իրավունքների դիտավորյալ ոտնահարում», «դատավորի անձնական շահագրգռվածության ակնհայտ փաստեր», «դատարանը չունի ողջամիտ և ընկալելի դատողություն՝ արդարադատությունը կազմալուծելու համար իր դեմ ներկայացված փաստերը հերքելու համար», «դատաքննության կամայական ժամկետներ», «դատավոր Կ. Զարիկյանի քմահաճույքի պտուղներ», «դատավորի և հայցվոր կողմի փոխշահագրգիռ համագործակցություն», «դատավոր Կ. Զարիկյանի՝ Հայաստանի Հանրապետության անունից արդարադատություն*

իրականացնելը դառնում է պետական դատական իշխանության հեղինակության դիտավորյալ ոտնահարման անհերքելի օրինակ», «դատավոր Կ. Զարիկյանը բացահայտորեն, դիտավորյալ և շարունակաբար խախտում է դատավարական օրենքը», «սույն գործի քննությունը վերածվել է անորակ վարչարարության, դատական քննության բուն նպատակը փոխարինվել է պետության անունից հայցվոր կողմի ցանկությունները սպասարկելու ինքնանպատակ ու անվերջանալի բեմականացման, որը դատավոր Կ. Զարիկյանը կազմակերպում է, բառացիորեն, ՀՀ զինանշանի և պետական դրոշի ներքո», «մտահոգիչ է նման դատավորի անժամկետ պաշտոնավարման հեռանկարը դատարանում պատկերացնելը», «առավել քան անհրաժեշտ եմ համարում դիմել ՀՀ Նախագահին՝ ում հրամանագրով նշանակվել եք դատավորի պաշտոնում, Ձեզ վստահված իրավունքները դադարեցնելու համար: Հայաստանի Հանրապետության անունից Դուք չպետք է սպասարկեք Ձեր անձնական շահերը, դա անթույլատրելի է արդարադատության ամենատարրական սկզբունքների ու նպատակների հետ»:

Դիմողը գտել է, որ հաշվի առնելով նման հայտարարությունների ակնհայտ վիրավորական և զրպարտիչ բնույթը՝ փաստաբանն առնվազն խախտել է փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1-րդ կետը:

Դիմողը նաև նշել է, որ փաստաբան Գևորգ Զաքմիշյանի միջնորդությունը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով մերժվել է ակնհայտ անհիմն լինելու պատճառով, քանի որ այն որևէ առնչություն չի ունեցել դատավորի ինքնաբացարկի հիմքերի հետ: Նշվածի հաշվառմամբ Դիմողը գտել է, որ փաստաբանն ընդամենը ցանկացել է վիրավորել դատավորին կամ նա չի տիրապետում դատավարական իրավունքի նորմերի նվազագույն պահանջներին: Երկու դեպքն էլ, ըստ Դիմողի, հարիր չեն փաստաբանի բարձր մասնագիտական կարգավիճակին:

Դիմողը խնդրել է փաստաբան Գևորգ Զաքմիշյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Դիմումին կից ներկայացվել է փաստաբան Գևորգ Զաքմիշյանի 11.05.2017թ. միջնորդության պատճենը:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 22.06.2017թ. թիվ 167-Ա/ԿԳ-17033 որոշման հիման վրա փաստաբան Գևորգ Զաքմիշյանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Սույն կարգապահական գործով Դիմող է ճանաչվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դատավոր Կարեն Զարիկյանի Կարեն Զարիկյանը:

Կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է փաստաբան Գոհար Հովհաննիսյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39.5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի նախապատրաստման ընթացքում Դիմող Կարեն Զարիկյանից պահանջարկվել է բացատրություն, սակայն Դիմողն այն չի ներկայացրել:

Դիմողը պատշաճ կերպով ծանուցվել է Պալատի խորհրդի նիստի ժամանակի և վայրի մասին, սակայն չի ներկայացել:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39.5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պատասխանող Գևորգ Զաքմիշյանից դիմումի վերաբերյալ պահանջվել է գրավոր բացատրություն, որը ներկայացվել է:

Գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողը Նախապատրաստողին ներկայացրել է բացատրություն և անդրադառնալով իր միջնորդություններում Դիմողին հասցեագրված կոնկրետ արտահայտություններին՝ Պատասխանողը նշել է հետևյալը:

«Դատաքննության կամայական ժամկետներ» արտահայտության կապակցությամբ Պատասխանողը նշել է, որ այն հիմնավոր է և Դիմողի համար վիրավորական չէ, քանի որ դատավարության կողմերի պատշաճ ծանուցված լինելու պայմաններում երկու տարի վարչական ակտի իրավաչափությունը ստուգելու ընթացքն ու ժամկետը որևէ կերպ չի տեղավորվում ՀՀ դատական օրենսգրքի 7-րդ հոդվածով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածով նախատեսված ողջամիտ ժամկետում գործը քննելու դատարանի համար սահմանված պարտականության մեջ: Պատասխանողի մոտեցման համաձայն՝ թիվ ՎԴ/4134/05/15 գործով Դիմողի նպատակը երրորդ անձ Գ. Գևորգյանի կառուցապատման գործողությունները հնարավորին տևական ժամկետով խոչընդոտելն է, որի համար օգտագործվում են դատավարական ամենատարբեր պատրվակներ: Դիմողի այս վարքագիծը, այն է՝ դատավարական օրենքի կոպիտ խախտումներ թույլ տալն, ունի կամային բնույթ, ուստի՝ Պատասխանողն օրինաչափ է համարում այն անվանել նաև քմահաճույք:

Ինչ վերաբերում է Դիմողի այն պնդմանը, որ Պատասխանողն իր հասցեին կատարել է զրպարտիչ հայտարարություններ, Պատասխանողը նշում է, որ զրպարտելու իմաստը մեկի վրա սուտ մեղադրանքներ բարդելն է, մեկի մասին վարկաբեկիչ, սուտ տեղեկություններ տարածելը, գրելը: Այնինչ, Դիմողը չի հերքել Պատասխանողի՝ ինքնաբացարկի միջնորդությունները: Ցանկացած երրորդ անձ, եթե կարդա այդ միջնորդություններն ու Դիմողի պատասխան գրությունները, չի կարող կարծիք կազմել, որ դրանք սուտ են, անհիմն, հետևաբար՝ վարկաբեկիչ, քանի որ դրանք չեն հերքվել օբյեկտիվ և համոզիչ փաստերով, որ պետք է դատարանը ներկայացներ իր մերժման որոշումների մեջ:

Խորհրդի նիստին Պատասխանողը չի ներկայացել՝ իր բացատրության մեջ միջնորդելով Խորհրդին կարգապահական գործը քննել՝ առանց իրեն՝ երկրից բացակայելու հիմքով:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. **<u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>**

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 31.08.2017թ. կազմել է եզրակացություն, որի համաձայն փաստաբան Գևորգ Չաքմիշյանի կողմից պետք է պահպանվեր Կանոնագրքի 4.1 ենթակետի կանոնները, այն է՝ փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ: Նախապատրաստողը նշել է նաև, որ դատավորի՝ դատավարական օրենքի խախտման դեպքում անհրաժեշտ էր կոնկրետ հիմնավորումներով դիմել արդարադատության խորհուրդ:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Պատասխանողն առարկություն չի ներկայացրել:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 23.08.2017թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 23.11.2017թ. ժամը 18:45-ին, Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2:

5. **<u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>**

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

ՀՀ վարչական դատարանի դատավոր Կարեն Զարիկյանի վարույթում քննվող թիվ ՎԴ/4134/05/15 վարչական գործով երրորդ անձ Գագիկ Գևորգյանի փաստաբան Գևորգ Չաքմիշյանի կողմից 10.05.2017 թվականին դատավորի ինքնաբացարկի վերաբերյալ գրավոր միջնորդություն տեքստում տեղ են գտել հետևյալ հայտարարությունները՝ *«երրորդ անձ Գ. Գևորգյանի իրավունքների դիտավորյալ ոտնահարում», «դատավորի անձնական շահագրգռվածության ակնհայտ փաստեր», «դատարանը չունի ողջամիտ և ընկալելի*

դատողություն՝ արդարադատությունը կազմալուծելու համար իր դեմ ներկայացված փաստերը հերքելու համար», «դատաքննության կամայական ժամկետներ», «դատավոր Կ. Զարիկյանի քմահաճույքի պտուղներ», դատավորի և հայցվոր կողմի փոխշահագրգիռ համագործակցություն, «դատավոր Կ. Զարիկյանի՝ Հայաստանի Հանրապետության անունից արդարադատություն իրականացնելը դառնում է պետական դատական իշխանության հեղինակության դիտավորյալ ոտնահարման անհերքելի օրինակ», «դատավոր Կ. Զարիկյանը բացահայտորեն, դիտավորյալ և շարունակաբար խախտում է դատավարական օրենքը», «սույն գործի քննությունը վերածվել է անորակ վարչարարության, դատական քննության բուն նպատակը փոխարինվել է պետության անունից հայցվոր կողմի ցանկությունները սպասարկելու ինքնանպատակ ու անվերջանալի բեմականացման, որը դատավոր Կ. Զարիկյանը կազմակերպում է, բառացիորեն, ՀՀ զինանշանի և պետական դրոշի ներքո», «մտահոգիչ է նման դատավորի անժամկետ պաշտոնավարման հեռանկարը դատարանում պատկերացնելը», «առավել քան անհրաժեշտ եմ համարում դիմել ՀՀ Նախագահին՝ ում հրամանագրով նշանակվել եք դատավորի պաշտոնում, Ձեզ վստահված իրավունքները դադարեցնելու համար: Հայաստանի Հանրապետության անունից Դուք չպետք է սպասարկեք Ձեր անձնական շահերը, դա անթույլատրելի է արդարադատության ամենատարրական սկզբունքների ու նպատակների հետ:»:

Նշված փաստը հաստատվում է գործում առկա ապացույցներով, այդ թվում՝ Դիմողի դիմումով, դատավորի ինքնաբացարկի վերաբերյալ միջնորդությամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանող Գևորգ Զաքմիշյանը փաստաբան է հանդիսանում 14.10.2008թ., և 2008-2017թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 1 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, որը կարճվել է:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, այդ թվում՝ կողմերի բացատրությունները, գտնում է, որ փաստաբան Գևորգ Զաքմիշյանը թույլ է տվել Կանոնագրքի 4.1 կետի խախտում հետևյալ պատճառաբանությամբ:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, **այդ թվում՝ հարգանքով վերաբերվել դատավորին** և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը:*

Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:

Սույն կապակցությամբ Պալատի խորհուրդը հարկ է համարում պատասխանել հետևյալ հարցադրմանը.

- Արդյո՞ք Պատասխանողի կողմից Դիմողին հասցեագրված ինքնաբացարկի միջնորդության մեջ Դիմողի վերաբերյալ արված արտահայտություններով, Պատասխանողն անհարգալից վերաբերմունք է ցուցաբերել Դիմողի՝ որպես դատավորի նկատմամբ:

Խորհուրդը հիշեցնում է, որ փաստաբանը, ունենալով առանձնահատուկ հասարակական կարգավիճակ, ունի իրավական և բարոյական պարտականությունների լայն շրջանակ: Փաստաբանը՝ որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձ, իրավունք ունի և պարտավոր է բարեխղճորեն պաշտպանել իր վստահորդների իրավունքներն ու օրինական շահերը՝ օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով: Միևնույն ժամանակ փաստաբանը նպաստում է արդարադատության իրականացմանը և այդ առաքելության շրջանակներում կոչված է ծառայել արդարադատության շահերին: Հետևաբար փաստաբանի պարտականությունների հասցեատերերը ոչ միայն վստահորդներն են, այլև արդարադատության գործառույթ իրականացնող մարմինները՝ դատարանները: Սույն դատողությունն արտացոլված է նաև Կանոնագրքի դրույթներում: Մասնավորապես, Կանոնագրքի 1.1 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին, ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:*

Հաշվի առնելով փաստաբանի գործառույթների և դրանցից բխող պարտականությունների բազմազան բնույթը՝ ՀՀ օրենսդրությամբ և Կանոնագրքով հստակորեն սահմանված են փաստաբանի այն հիմնական պարտականությունները, որոնք նա ունի ինչպես վստահորդի, այնպես էլ դատարանի հետ հարաբերություններում: Մասնավորապես, խոսքը վերաբերում է Կանոնագրի 4.1 կետին, որը նախատեսում է դատավորին հարգանքով վերաբերվելու պարտականություն: Փաստաբանի վարքագիծը, որը խախտում է Կանոնագրքի նշված կանոնը, կասկածի տակ է դնում սեփական պարտականությունների նկատմամբ փաստաբանի ընդհանուր բարեխղճությունը, քանի որ փաստաբանի պարտականությունները չեն սահմանափակվում միայն իր վստահորդի հանձնարարության կատարմամբ, այլ ընդգրկում են տարաբնույթ այլ պարտականություններ, այդ թվում՝ դատավորին հարգանքով վերաբերվելու պարտականություն:

Ավելին՝ Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE-ի) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ մեկնաբանությունների «դ» կետի համաձայն՝ *փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակազրկել ինքն իրեն կամ առհասարակ*

փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկվի տվյալ մասնագիտությունը:

Սույն դրույթը վկայում է այն մասին, որ կշեռքի մի նժարին դրված է փաստաբանի արտահայտվելու ազատությունը, իսկ մյուս նժարի վրա՝ փաստաբանության, որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի, որին Սահմանադրությամբ վերապահվել է պետության կողմից երաշխավորված անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովումը, հեղինակությունը, մի կառույցի հեղինակությունը, որին անդամագրված են արդարադատության իրականացման գործընթացում հասարակության և դատարանի միջև միջնորդ հանդիսացող փաստաբանները, կառույց, որի բարձր հեղինակությունից է նաև կախված յուրաքանչյուր փաստաբանի հեղինակությունը պետական մարմինների, դատարանների և այլ անձանց հետ հարաբերվելիս: Այս տեսանկյունից, բնականաբար, արդարացված և հավասարակշռված է փաստաբանի արտահայտվելու ազատության սահմանափակումը, որն ուղղված է մյուս բոլոր փաստաբանների և առհասարակ փաստաբանության հեղինակության բարձրացմանը: Նման սահմանափակումն անհրաժեշտ է հասարակության (այդ թվում՝ փաստաբանական համայնքի) համար:

Դատարանի և դատավորի նկատմամբ հարգալից վերաբերմունքը հանդիսանում է դատավարության բոլոր կողմերի, այդ թվում ներկայացուցիչ-փաստաբանների հիմնարար պարտականություններից մեկը: Ընդ որում, փաստաբաններն այս հարցում ունեն առանձնահատուկ հանձնառություն, քանի որ կոչված են նպաստել արդարադատության իրականացմանը և հանդիսանում են միջնորդ հասարակության և դատական իշխանության միջև:

Դատարանի կամ դատավորի նկատմամբ հարգալից վերաբերմունքը չի նշանակում փաստաբանի կողմից իր վստահորդների շահերը պաշտպանելիս դատարանի հետ շփումներում կաշկանդվածություն կամ դատավորի համակրանքը շահելու գործողությունների իրականացում՝ ի վնաս իր վստահորդի շահերի: Կանոնագրքի 4.1 կետի երկրորդ նախադասությամբ փաստվում է, որ դատարանում գործող վարվելակերպի կանոններին ենթարկվելու փաստաբանի պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ հարգանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:

Միևնույն ժամանակ վստահորդի շահերի պաշտպանությունը չի կարող իրականացվել Կանոնագրքին հակասող կամ Կանոնագրքի դրույթները խախտող եղանակներով և միջոցներով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և*

ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:

Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Պալատի խորհուրդը արձանագրում է, որ դատավորի նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորելու պարտականությունը նախատեսված է Կանոնագրքով, ուստի՝ չի կարող իրավաչափ համարվել դատավորի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելը նույնիսկ վստահորդի շահերի պաշտպանության նպատակադրմամբ: Նմանապես, վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալը չի կարող պատրվակ հանդիսանալ դատարանի հետ հարաբերություններում ոչ իրավաչափ վերաբերմունք ցույց տալու համար:

Խորհուրդը, անդրադառնալով քննարկվող արտահայտությունների՝ դատավորի նկատմամբ անհարգալից լինելուն, արձանագրում է, որ գործով չշահագրգռված և չեզոք անձի համար ևս ակնհայտ է, որ Պատասխանողի կողմից օգտագործվող բառապաշարը, այն է՝ **«երրորդ անձ Գ. Գևորգյանի իրավունքների դիտավորյալ ոտնահարում», «դատավորի անձնական շահագրգռվածության ակնհայտ փաստեր», «դատարանը չունի ողջամիտ և ընկալելի դատողություն՝ արդարադատությունը կազմալուծելու համար իր դեմ ներկայացված փաստերը հերքելու համար», «դատաքննության կամայական ժամկետներ», «դատավոր Կ. Զարիկյանի քմահաճույքի պտուղներ», դատավորի և հայցվոր կողմի փոխշահագրգիռ համագործակցություն, «դատավոր Կ. Զարիկյանի՝ Հայաստանի Հանրապետության անունից արդարադատություն իրականացնելը դառնում է պետական դատական իշխանության հեղինակության դիտավորյալ ոտնահարման անհերքելի օրինակ», «դատավոր Կ. Զարիկյանը բացահայտորեն, դիտավորյալ և շարունակաբար խախտում է դատավարական օրենքը», «սույն գործի քննությունը վերածվել է անորակ վարչարարության, դատական քննության բուն նպատակը փոխարինվել է պետության անունից հայցվոր կողմի ցանկությունները սպասարկելու ինքնանպատակ ու անվերջանալի բեմականացման, որը դատավոր Կ. Զարիկյանը կազմակերպում է, բառացիորեն, ՀՀ զինանշանի և պետական դրոշի ներքո», «մտահոգիչ է նման դատավորի անժամկետ պաշտոնավարման հեռանկարը դատարանում պատկերացնելը», «առավել քան անհրաժեշտ եմ համարում դիմել ՀՀ Նախագահին՝ ում հրամանագրով նշանակվել եք դատավորի պաշտոնում, Ձեզ վստահված իրավունքները դադարեցնելու համար: Հայաստանի Հանրապետության անունից Դուք չպետք է սպասարկեք Ձեր անձնական շահերը, դա անթույլատրելի է արդարադատության ամենատարրական սկզբունքների ու նպատակների հետ»,** ուղղված է եղել Պատասխանողի մասնագիտական գիտելիքների, անաչառության, պրոֆեսիոնալ ձեռնհասության, անձնական բարոյական հատկանիշների նսեմացմանը, դուրս է եկել մրցակցային դատավարության շրջանակներում ընդունելի և փաստաբանի մասնագիտական և հասարակական կոչումից բխող խոսքի և արտահայտման ազատության շրջանակներից և չի առնչվում Պատասխանողի կողմից իր

վստահորդի գործի և դիրքորոշման պատշաճ փաստարկման, վստահորդի շահերը բոլոր օրինական միջոցներով պաշտպանելու փաստաբանի իրավական պարտականությանը:

Իր կողմից օգտագործվող արտահայտություններով Պատասխանողը որևէ փաստական տվյալ կամ հանգամանք չէր կարող հիմնավորել, քանի որ այդ արտահայտություններն իրենցում որևէ տեղեկատվություն չէին պարունակում, որը կհիմնավորեր Դիմողին հայտնած ինքնաբացարկը կամ ընդհանրապես կարող էր ենթարկվել մասնագիտական իրավական վերլուծության, այլ, փոխարենը, այդ արտահայտությունները պարունակում էին Դիմողին ուղղված անձնական բնույթի գնահատականներ և անհարգալից որակումներ:

Վերոշարադրյալի հիման վրա Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի կողմից անհարգալից վերաբերմունք է ցուցաբերվել դատավորի նկատմամբ և դրա հետևանքով խախտվել են Կանոնագրքի 4.1 կետի պահանջները:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի համաձայն՝ Պալատի խորհուրդը՝ լուծում է փաստաբանին պատասխանատվության ենթարկելու և կարգապահական տույժ նշանակելու հարցը:

Օրենքի 39.9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:
Պալատի խորհուրդը հաշվի առնելով Գևորգ Չաքմիշյանի անձը, կարգապահական խախտման հետևանքները, մեղքի աստիճանը, տույժերի բացակայությունը, ինչպես նաև փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ, գտնում է, որ վերջինիս նկատմամբ պետք է կիրառել խիստ նկատողություն տույժի տեսակը և որպես լրացուցիչ տույժ՝ իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով՝ 6 ամսվա ընթացքում 4 ակադեմիական ժամ ժամաքանակով:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.- րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի, 3-րդ մասի, ՀՀ Փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի» 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Գևորգ Չաքմիշյանին, (արտոնագիր 852) ճանաչել մեղավոր Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի խախտման համար.

2. Փաստաբան Գևորգ Չաքմիշյանի (արտոնագիր 852) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ 6 ամսվա ընթացքում իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն «Դեոնթոլոգիա» թեմայով՝ 4 ժամ ժամաքանակով:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Գևորգ Չաքմիշյանին և դիմողին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝ **Արայիկ Ղազարյան**

23 նոյեմբերի 2017թ.
թիվ ԿԳ/104-Ա
ք. Երևան